Կորպորատիվ կառավարման

ԶԵԿՈՒՅՑ

2024թ.

Ընկերության անվանում	«**Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր**» **փակ բաժնետիրական ընկերություն**
Հասցե	**ք. Երևան, Աբովյան 27**
Ինտերնետային կայք	**www.energyoperator.am**
E-mail:	**office@energyoperator.am**

ՀՀ Իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությունում գրանցման համարը և ամսաթիվը՝ 27312003639, 05.11.2003թ., վկայական թիվ 03 Ա 062403

Իրավակազմակերպական ձևը՝ փակ բաժնետիրական ընկերություն

«Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր» ՓԲ ընկերության բոլոր բաժնետոմսերը տեղաբաշխված են, պատկանում են Հայաստանի Հանրապետությանը, վճարված են նրա կողմից և կառավարվում են ՀՀ կառավարության և նրա լիազորված անձի՝ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի կողմից: Ընկերության կանոնադրական կապիտալը կազմում է 3 450 241 482.4647 (երեք միլիարդ չորս հարյուր հիսուն միլիոն երկու հարյուր քառասունմեկ հազար չորս հարյուր ութսուներկու 4647/10000) ՀՀ դրամ, որը կազմում է 316 349 (երեք հարյուր տասնվեց հազար երեք հարյուր քառասունինը) հատ հասարակ (սովորական) անվանական բաժնետոմս: Մեկ բաժնետոմսի արժեքը 10906.4403 (տասը հազար ինը հարյուր վեց 4403/10000) ՀՀ դրամ:

1. Ընկերության վարչակազմակերպական կառուցվածքը


«ԷԼԵԿՏՐԱԷԼԵԿՏՐՈԳԵՏԻԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՕՊԵՐԱՏՈՐ» ՓԲԸ-Ի ՎԱՐՉԱԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔ
Գլխավոր տնօրեն - Գլխավոր վերահսկող
«ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ՇՈՒԿԱՅԻ» ՍՊԸ
Տնտեսագիտության բաժին
Ֆինանսական տնտեսագիտության բաժին
Գլխավոր տնօրենի տեղակալ - Գլխավոր մասնագետ
Գլխավոր տնօրենի տեղակալ - Գլխավոր մասնագետ
Տեղեկատվության և համակարգչային ծառայությունների բաժին
Օպերատիվ տեղեկատվության ավտոմատացված միջոցների ծառայություն
Կոմերցիոն գծի բաժին
Դպիտատարի կոմերցիոն գծի բաժին
«ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ՇՈՒԿԱՅԻ» ՍՊԸ
Էներգետիկ ռեժիմների կառավարման բաժին
Էլեկտրական ցանցերի զարգացման բաժին
Հեռակառավարման և ցանցային կապերի բաժին
Էներգաբաշխիչ ցանցերի գործունեության բաժին
Էներգետիկ ռեսուրսների գնումների բաժին
Էներգաբաշխիչ ցանցերի հուսալի աշխատանքի մոնիթորինգի և կարգավորման գծով բաժին
Էներգետիկ ռեսուրսների գնումների գծով բաժին
Էներգետիկ ռեսուրսների գնումների գծով բաժին
Էներգետիկ ռեսուրսների գնումների

2. Ընկերության կորպորատիվ կառուցվածքը

Համաձայն Կորպորատիվ կառավարման Կանոնագրքի և Ընկերության Կանոնադրության պահանջների՝ Ընկերությունը սահմանել է հետևյալ կորպորատիվ կառուցվածքը.

ա) Բաժնետիրոջ ընդհանուր ժողով
բ) Խորհուրդ
գ) Գործադիր մարմին

3. Բաժնետիրոջ ընդհանուր ժողովը (ԲԸԺ)

3.1. Հաշվետու տարում գումարվել է բաժնետիրոջ վեց արտահերթ ընդհանուր ժողովներ՝ 2024թ. հունվարի 26-ին, հունվարի 30-ին, փետրվարի 5-ին, հունիսի 14-ին, հոկտեմբերի 22-ին և հոկտեմբերի 28-ին: Բաժնետիրոջ արտահերթ ընդհանուր ժողովները գումարվել են ՀՀ Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունում:
3.2. Բաժնետիրոջ ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերը ԲԸ ժողովի մասին ծանուցվել է էլեկտրոնային եղանակով: Օրակարգը և համապատասխան փաստաթղթերը ուղարկվել են էլեկտրոնային եղանակով: Օրակարգի և ԲԸ ժողովին վերաբերող տեղեկությունները և փաստաթղթերը ԲԸ ժողովին մասնակցելու իրավունք ունեցող անձանց տրամադրելու կարգը սահմանված է Ընկերության Կանոնադրությամբ (հոդված 11.5 կետում):
3.3. Բաժնետերը հնարավորություն է ունեցել ԲԸ ժողովին մասնակցել լիազորված անձի միջոցով: Լիազորագրի ձևերը, Ընկերության Կանոնադրության 11.4 հոդվածով սահմանված կարգով, հասանելի է եղել բաժնետիրոջը:
3.4. Բաժնետերը կումուլյատիվ քվեարկությամբ չի քվեարկել, քանի որ բաժնետերը մեկն է:

4. Ընկերության Խորհուրդը

4.1. Խորհրդի գործառույթները

Կանոնագրքի II գլխի II.1 սկզբունքը և Ընկերության կանոնադրության 13.5 հոդվածը սահմանում են Խորհրդի բացառիկ իրավասությունները: Խորհրդին պատվիրակված իրավասություններ չեն սահմանվել:

4.2. Խորհրդի գործունեությունը

2024թ. ընթացքում Խորհուրդը գումարել է 3 խորհրդի նիստ՝ որոնք տեղի են ունեցել հունվարի 22-ին, մայիսի 24-ին և հոկտեմբերի 22-ին: Նիստերը անց են կացվել հեռակա քվեարկության միջոցով:

4.3. Խորհրդի կազմը

2024թ. Ընկերության խորհուրդը բաղկացած է եղել 13 անդամներից, որոնցից տասներկուսը ոչ գործադիր են:

Խորհրդի գործադիր անդամը Ընկերության ընթացիկ ղեկավարման մեջ ներգրավված անձ է:

Խորհրդի ոչ գործադիր անդամը այն անձն է, ով ներգրավված չէ Ընկերության կամ նրա որևէ դուստր ընկերության ընթացիկ ղեկավարման մեջ:

«ԷԷՀՕ» ՓԲ ընկերության Խորհրդի 2023թ. փետրվարի 24-ի նիստում Ընկերության Խորհրդի նախագահ է ընտրվել ՀՀ Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության իրավաբանական վարչության պետ Ա.Խաչատրյանը:

Ընկերության Խորհրդի կազմը						
	Պաշտոն	**Անուն, ազգանուն**	**Գործադիր**	**Ոչ գործադիր**	**Անկախ**	**Խորհրդի անդամ է սկսած՝**
1.	Նախագահ	Ա.Խաչատրյան		ոչ գործադիր		02.2023թ.
2.	Անդամ	Ա.Հարությունյան		ոչ գործադիր		06.2014թ.
3.	Անդամ	Մ. Մեսրոպյան		ոչ գործադիր		08.2021թ.
4.	Անդամ	Ս. Կարայան		ոչ գործադիր		02.2019թ.
5.	Անդամ	Է. Մարտիրոսյան		ոչ գործադիր		08.2020թ.
6.	Անդամ	Կ. Հարությունյան		ոչ գործադիր		10.2015թ.
7.	Անդամ	Դ. Միրզոյան		ոչ գործադիր		10.2023թ.
8.	Անդամ	Ա. Բաղդասարյան		ոչ գործադիր		01.2024թ.
9.	Անդամ	Ա. Կիրակոսյան		ոչ գործադիր		06.2020թ.
10.	Անդամ	Ա. Աբաջյան		ոչ գործադիր		10.2022թ.
11.	Անդամ	Մ. Մնացականյան Դ.Գրիգորյան	գործադիր			մինչև 14.06.2024թ. սկսած 14.06.2024թ.
12.	Անդամ	Ս. Պետրոսյան			անկախ	09.2016թ.
13.	Անդամ	Ե. Ազոյան		ոչ գործադիր		09.2016թ.

4.4. Տեղեկություններ Խորհրդի անդամների մասին

Արամ Խաչատրյան

Ծննդյան տարեթիվ - 1992 թ:

Կրթություն
2009-2013 թթ.- Գավառի պետական համալսարան, հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետ, բակալավրիատ,
2011-2013 թթ. - Սանկտ Պետերբուրգի արտաքին տնտեսական կապերի, էկոնոմիկայի և իրավունքի ինստիտուտ, իրավագիտություն մասնագիտությամբ, իրավագետի դիպլոմավորված մասնագետի որակավորում:
2013-2016 թթ. - ՀՀ պետական կառավարման ակադեմիա Հանրային իրավունք, ասպիրանտուրա:

Աշխատանքային գործունեություն
2013-2014 թթ. - Գավառի «28-ՇՄՇ» ԲԲԸ-ի իրավաբանական բաժնի պետ,
2014-2017 թթ. - ՀՀ Գեղարքունիքի մարզպետարան,մարզպետի տեղակալի օգնական,
2017-2018 թթ. - ՀՀ առողջապահության նախարարության առողջապահական տեսչական մարմնի հյուսիս-արևելյան տարածքային կենտրոնի ղեկավարի տեղակալ,
2018-2019 թթ. - ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետի տեղակալ,
2019-2020 թթ. ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի իրավաբանական բաժնի վարիչ,
2020-2021թթ. ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի իրավաբանական բաժնի պետ-գլխավոր իրավաբան,
2021 թվականի օգոստոսից-մինչև դեկտեմբերի 15-ը ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի խորհրդական,
2021 թվականի դեկտեմբերի 15-ից ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության իրավաբանական վարչության պետ:

Այլ տվյալներ
Իրավաբանական գիտությունների թեկնածու,
Մեկ մենագրության և մեկ տասնյակից ավելի գիտական աշխատությունների հեղինակ:

Անձնական տվյալներ՝ ամուսնացած է, ունի մեկ երեխա:

Արամ Հարությունյան

Ծննդյան տարեթիվ 06/12/1970

Կրթություն
1987-1993թթ. - Հայկական գյուղատնտեսական ինստիտուտ, տնտեսագետ-կազմակերպիչի որակավորում:

Աշխատանքային գործունեություն
1993-1998թթ. - ՀՀ կառավարությանն առընթեր պետական ունեցվածքի հաշվառման և ապապետականացման վարչություն, որպես տնտեսագետ, բաժնի պետի տեղակալ:
1998-2002թթ. - ՀՀ սեփականաշնորհման նախարարություն, որպես բաժնի պետի տեղակալ, բաժնի պետ:
2002-2004թթ. - «Աճուրդի կենտրոն» ՊՈԱԿ, որպես բաժնի պետ:
2004-2006թթ. - «Ընկերությունների աջակցման և պետական գույքի գնահատման գործակալությունե ՊՈԱԿ, որպես վարչության պետ:
2006-2008թթ. - ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն, որպես գլխավոր աուդիտոր:
2008-2018թ.թ. - ՀՀ ԿԱ պետգույքի կառավարման վարչության լուծարման բաժնի պետ,
2018թ.-ից առ այսօր - ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության պետգույքի կառավարման վարչության լուծարման բաժնի պետ:

Անձնական տվյալներ - ամուսնացած է , ունի երեք երեխա:

Մեսրոպ Մեսրոպյան

Ծննդյան տարեթիվ 12/03/1972

Կրթություն

2000-2002 Թթ - Հայաստանի Պետական Ճարտարագիտական Համալսարանի (ՀՊՃՀ) ասպիրանտուրայի էներգետիկական ֆակուլտետ, դիպլոմավորված որպես ճարտարագետ հետազոտող,

1998-1999 - Ֆրանսիայի Միջուկային Տեխնիկայի և Գիտությունների Ազգային Ինստիտուտ, ազատ ունկնդիր,

1996-1998 - ՀՊՃՀ-ի ասպերանտական դպրոցի մագիստրատուրա, Էներգետիկական ֆակուլտետ, դիպլոմավորված որպես ճարտարագետ մագիստրոս:

1990-1996 ՀՊՃՀ-ի էներգետիկական ֆակուլտետ, դիպլոմավորված որպես ճարտարագետ ջերմաէներգետիկ:

Մասնագիտական գործունեություն

1989-1990թթ. - Հրազդան ՋԷԿ, Կենտրոնական վերանորոգման արտադրամաս, 3-րդ կարգի փականագործ,

1999-2001թթ. - ՀՊՃՀ Էներգետիկական դեպարտամենտ, կրտսեր գիտաշխատող,

2000-2003թթ. - «Հայէներգո» ՓԲԸ-ի Էներգետիկական ռեժիմների պլանավորման բաժին, ճարտարագետ,

2003-2007թթ. - «Հայէներգո» ՓԲԸ-ի Էներգետիկական ռեժիմների պլանավորման ծառայություն, ծառայության պետ,

2007-2013թ-ի ապրիլ - «ՀայՌուսգազարդ» ՓԲԸ-ի «Հրազդան-5 շինարարության տնօրինություն» հիմնարկի Սարքավորումների և նյութատեխնիկական մատակարարման բաժին, գլխավոր մասնագետ,

2014-2019թթ. - «Ռեդինետ» ՓԲԸ, էներգետիկական շինարարության ծրագրերի ղեկավար,

2019-2020թթ. - ՀՀ ՀԾԿ հանձնաժողովի անդամ,

2020-2021թթ - ՀՀ Կոտայքի մարզպետարան, մարզպետ,

2021-2024թթ. - «Հաշվարկային կենտրոն» ՓԲԸ գլխավոր տնօրեն,

11.2024թ. -ից ՀԾԿ հանձնաժողովի նախագահ:

Անձնական տվյալներ – ամուսնացած է, ունի երկու երեխա:

Դավիթ Միրզոյան

Ծննդյան տարեթիվ- 24.09.1975 թ.

Կրթություն
1982-1992թ. – Այգեձորի միջնակարգ դպրոց:
1992-1997թթ. - Երևանի ժողովրդական տնտեսության ինստիտուտի ինժեներա-տնտեսագիտական ֆակուլտետ, ստացել է ինժեներ– տնտեսագետի որակավորում:

Աշխատանքային գործունեություն
1997–2002թթ. - Այգեձորի միջնակարգ դպրոց, մաթեմատիկայի ուսուցիչ,
2003 - 2007թթ. - ՀՀ արդարադատության նախարարության աշխատակազմի իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության Արաբկիրի տարածքային բաժին, առաջին կարգի մասնագետ,
2007-2012թթ. - ՀՀ արդարադատության նախարարության աշխատակազմի իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության Արաբկիրի տարածքային բաժին, գլխավոր մասնագետ,
2012-2018թթ. - ՀՀ արդարադատության նախարարության աշխատակազմի իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության սպասարկման և հրապարակային ծանուցման բաժին, գլխավոր մասնագետ,
2018-2021թթ. - «Արդարադատության նախարարության աշխատակազմի իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության հրապարակային ծանուցումների բաժին, բաժնի պետ,
09.2021-11.2021թթ. - «Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարաության վարչական վերահսկողության վարչություն, փորձագետ,
11.2021-11.2022թթ. - «Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարաության վարչական վերահսկողության վարչություն, վարչական վերահսկողության մշտադիտարկման բաժնի պետ,
11.2022թ-ից - «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ գլխավոր տնօրենի տեղակալ,
02.10.2023թ.-ից - «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ գլխավոր տնօրենի պարտականությունները կատարող,
2024թ - «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ գլխավոր տնօրեն:

Անձնական տվյալներ - Ամուսնացած է:

Սուրեն Կարայան

Ծննդյան տարեթիվ՝ 26/04/1973թ.

Կրթություն

1990-1995թթ.- Երևանի պետական համալսարան,
1995-1998թթ.- Երևանի պետական համալսարան՝ ասպիրանտ:

Աշխատանքային գործունեություն

1997-1998թթ. - ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն՝ հարկային քաղաքականության վարչության առաջատար մասնագետ (պայմանագրային հիմունքներով), 1998-1999թթ. - ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն՝ հարկային քաղաքականության վարչության բաժնի պետի պաշտոնակատար, բաժնի պետ,
1999-2000թթ. – ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն՝ հարկային քաղաքականության վարչության պետի պաշտոնակատար, վարչության պետ,
2000-2001թթ. – ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն՝ պետական եկամուտների քաղաքականության գլխավոր վարչության պետի տեղակալ, հարկային քաղաքականության վարչության պետ,

2001-2002թթ. - ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն՝ պետական եկամուտների քաղաքականության գլխավոր վարչության պետ
2002-2006թթ.-ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն՝ պետական եկամուտների քաղաքականության վարչության պետ
2006-2008թթ.-ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն՝ նախարարի տեղակալ
2008-2015թթ.- ՀՀ ֆինանսների նախարարություն, նախարարի տեղակալ,
2015-2016թթ.- ՀՀմիջազգայինտնտեսականինտեգրմանևբարեփոխումների նախարարի առաջին տեղակալ,
2016-2018 մայիս ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարար,
02.2019թ.- մինչ օրս «Հրազդանի էներգետիկ կազմակերպություն (ՀրազՋԷԿ)» ԲԲԸ գլխավոր տնօրեն:

Պարգևատրվել է՝ «Անանիա Շիրակացի», «Հայրենիքին մատուցած ծառայությունների համար» 2-րդ աստիճանի մեդալներով, արժանացել է ՀՀ պաշտպանության նախարարի պատվոգրին:

Անձնական տվյալներ՝ ամուսնացած է, ունի 2 երեխա:

Արտաշես Կիրակոսյան

Ծննդյան տարեթիվ՝ 12/10/1977թ.

Կրթություն
1984-1994թթ. - Լենինականի Կիրովի անվան մրջնակարգ դպրոց,
1994-1999թթ. - Երևանի պետական համալսարանի իրավաբանական ֆակուլտետ, իրավաբանի որակավորում:

Աշխատանքային գործունեություն
2001-2002թթ. - «ՀԷՑ» ՓԲԸ-ի «Կումայրի» մասնաճյուղում որպես իրավաբան,
2003-2008թթ. - ՀՀ ոստիկանության քննչական գլխավոր վարչության Շիրակի մարզի քննչական բաժնում որպես քննիչ,
2008-2009թթ. - ՀՀ ոստիկանության պետի աշխատակազմում որպես ՀՀ ոստիկանության պետի տեղակալի օգնական,
2009-2009թթ. - ՀՀ ոստիկանության քննչական գլխավոր վարչության Երևան քաղաքի քննչական վարչության Կենտրոնի քննչական բաժնում որպես քննիչ,
2010–2011թթ. - ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունում որպես փորձագետ խորհրդատու, ապա նախարարի օգնական, նախարարի խորհրդական:
2011-2013թթ. - ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունում որպես աշխատակազմի ղեկավարի տեղակալի պաշտոնակատար,
2013-2018 - ՀՀ գյուղատնտեսության նախարարության աշխատակազմի ղեկավար,
2018-2020թթ. - ՀՀ Էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության աշխատակազմի ղեկավարի պաշտոնակատար,
2020թ.-ից - «Միջազգային էներգետիկ կորպորացիա» ՓԲԸ-ի գլխավոր տնօրեն:

Անձնական տվյալներ՝ ամուսնացած է, ունի երկու երեխա:

Էդուարդ Մարտիրոսյան

Ծննդյան տարեթիվ՝ 22/06/ 1974թ.,

Կրթություն
1991-1996թթ.-Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարանի տրանսպորտային Ֆակուլտետ,
1993-1995թ.թ. - զինվորական պատրաստում նույն համալսարանի զինվորական ամբիոն,
09.1998թ.- զինվորական ծառայություն ՀՀ ազգային անվտանգության ծառայությունում:

Աշխատանքային գործունեություն
10.2018թ. - ՀՀ ազգային անվտանգության ծառայության տնօրենի տեղակալ,
09.2019թ. - ՀՀ ազգային անվտանգության ծառայության տնօրենի պարտականությունների ժամանակավոր կատարող,
03.2020թ. - ՀՀ ազգային անվտանգության ծառայության տնօրեն,
08.2020թ. - «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի գլխավոր տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար,
16.02.2021թ.-ից - «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի գլխավոր տնօրեն:

Անձնական տվյալներ՝ ամուսնացած է, ունի երկու երեխա:

Ալիսա Բաղդասարյան

Ծննդյան տարեթիվ - 14/09/1975թ.

Կրթություն

1992-1997թթ. - Երևանի Ժողովրդական տնտեսության ինստիտուտ, տնտեսագետ,

2000-2004թթ. - ՀՀ արդյունաբերության առևտրի նախարարություն, Ը 00002 Տնտեսության նրա ճյուղերի տնտեսագիտության և կառավարում, ասպիրանտուրա:

Աշխատանքային փորձ
1996-2002 թթ. - «Քար և սիլիկատներ» ԳԱՖ տնտեսագետ,
2002-2005թթ. - «Արնիիկպ» ՀՁ ՓԲԸ հաշվապահ-տնտեսագետ,
2005-2005թթ. - «Ստանկոսնաբ» ՓԲԸ գլխավոր հաշվապահ, համատեղության կարգով,
2005-2017թթ. - «ՍԱՍ Գրուպ» ՍՊԸ գլխավոր հաշվապահ,
2008-2013թթ. - «Ռոյալ-Արմենիա»ՍՊԸ գլխավոր հաշվապահ,
2013-2017թթ. - «Կոմֆորտ Ռ և Վ» ՍՊԸ ներքին աուդիտ, գլխավոր հաշվապահ,
2016-2017թթ. - «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ ֆինանսատնտեսագիտական, մատակարարման հարցերով տնօրեն,
06.2017թ. մինչ այսօր «Երևանի ՋԷԿ» ՓԲԸ ֆինանսական տնօրեն,
2019թ.-ից - Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան, ֆինանսական հաշվառում ամբիոնի դասախոս,
05.2020թ.-ից մինչ այսօր «Երևանի ՋԷԿ» ՓԲԸ գլխավոր տնօրենի պարտականությունները կատարող:

Գիտական աշխատություններ - տպագրված գիտական հոդվածներ:

Կարեն Հարությունյան

Ծննդյան տարեթիվը՝ 18/08/1968թ.

Կրթություն

1987-1991թթ. - Հայկական պետական տնտեսագիտական համալսարան /Երևանի ժողտնտեսության ինստիտուտ, ապրանքագետ, առևտրի կազմակերպիչ:

Աշխատանքային գործունեություն

1991-1996թթ.- «Հայաստանի ապրանքահումքային բորսա» բրոքերային կազմակերպության ղեկավար,

1996 – 1997 թթ. - «Նուբարաշենի էլեկտրացանց» ՓԲԸ, գլխավոր հաշվապահ,

1996 - 2002 թթ. - «Երևանի էլեկտրացանց» ՓԲԸ, ֆինանսական տնօրեն, գլխավոր հաշվապահ,

1997-2001թթ. - ՀՀ «Էներգետիկայի գիտահետազոտական ինստիտուտ» ՓԲԸ, տնտեսագետ – էներգետիկ,

03.-11.2002թ. - «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ, ֆինանսական տնօրեն,

2002- 05.2012թ. - «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ, ֆինանսական տնօրենի տեղակալ, գլխավոր գանձապետ, գլխավոր հաշվապահ,

08.2012թ. – 11.2014թ. - MVV decon, AEG Service, SAUR S.A.S. ՓԲԸ, «Շիրակ-ջրմուղկոյուղի» ՓԲԸ ֆինանսական տնօրեն և «Լոռի-ջրմուղկոյուղի» ՓԲԸ, «Շիրակ-ջրմուղկոյուղի» ՓԲԸ և «Նոր Ակունք» ՓԲԸ ֆինանսական կոորդինատոր,

06.2014թ.- 05.2015թ. - Grant Thornton Տաջիկստան, ֆինանսական փորձագետ

08.2014թ.- 16.10.2015թ. - «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ տնօրենի տեղակալ, ֆինանսական գծով տնօրեն,

16.10.2015թ. մինչ օրս «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ գլխավոր տնօրեն:

Հայաստանի հաշվապահների և աուդիտորների ասոցիացիա, Հաշվապահների միջազգային ֆեդերացիայի անդամ:

Անձնական տվյալներ՝ ամուսնացած է, ունի երկու երեխա:

Ալվինա Աբաջյան

Կրթություն

1998-2002թթ. - Երևանի պետական համալսարանի տնտեսագիտության ֆակուլտետ՝ բակալավրի աստիճան՝ Ֆինանսներ և Հաշվապահություն,
2002-2004թթ. - Երևանի պետական համալսարանի տնտեսագիտության ֆակուլտետ՝ մագիստրոսի աստիճան Ֆինանսներ և Հաշվապահություն,
2002-2004թթ. - Հայաստանի Հանրապետության պետական կառավարման ակադեմիա Պետական կառավարման և տեղական ինքնակառավարման դիպլոմ, Հանրային ծառայողի որակավորում,
2008թ.-ից ներկա - ACCA (Երդվյալ որակավորված հաշվապահների ասոցիացիա):

Աշխատանքային գործունեություն

2006-2008թթ. - «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ, Վարկերի և ռեսուրսների ներգրավման բաժին,Միջազգային վարկային ծրագրերի առաջատար վարկային մասնագետ,
2008-2011թթ. - «Քեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա» ՍՊԸ, աուդիտոր,
2011-2014թթ. - «Քեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա» ՍՊԸ, ավագ աուդիտոր,
2014-2019թթ. - «Զանգեզուրի Պղնձամոլիբդենային Կոմբինատ» ՓԲԸ, Պլանավորման, բյուջետավորման և հաշվետվության բաժնի ղեկավար,
2019-2022թթ. - «ՔոնթուրԳլոբալ Հիդրո Կասկադ» ՓԲԸ, Գլխավոր ֆինանսական տնօրեն,
2023թ.-ից մինչ օրս - «ՔոնթուրԳլոբալ Հիդրո Կասկադ» ՓԲԸ-ի գլխավոր տնօրեն:

Ստեփան Պետրոսյան

Ծննդյան տարեթիվ՝ 17/07/1951թ.

Կրթություն

1968-1973թթ. - Երևանի պետական համալսարանի ֆիզիկայի ֆակուլտետ,
1973-1976թթ. Սանկտ Պետերբուրգի ԽՍՀՄ ԳԱԱ Իոֆֆեյի անվան Ֆիզիկա-տեխնիկական ինստիտուտի ասպիրանտուրայում՝ կիսահաղորդիչների ֆիզիկա մասնագիտությամբ,
1977-1984թթ. - Երևանի պետական համալսարանի ռադիոֆիզիկայի ֆակուլտետի կիսահաղորդիչների և դիէլեկտրիկների ֆիզիկայի ամբիոնի կրտսեր, ավագ գիտաշխատող,
1984-1991թթ. - Երևանի պետական համալսարան, ռադիոֆիզիկայի ֆակուլտետի կիսահաղորդիչների և դիէլեկտրիկների ֆիզիկայի ամբիոնի դոցենտ,
1991-2004թթ. - Երևանի պետական համալսարանի ռադիոֆիզիկայի ֆակուլտետի կիսահաղորդիչների և դիէլեկտրիկների ֆիզիկայի ամբիոնի պրոֆեսոր:
2003-2008թթ. - «Կիսահաղորդչային նանոէլեկտրոնիկա» հանրապետական նպատակային ծրագրի տեսական խմբի ղեկավար,
2004-2008թթ. - Ռուս-հայկական (Սլավոնական) պետական համալսարանի ֆիզիկա-տեխնիկական ֆակուլտետի դեկան, պինդ մարմնային էլեկտրոնիկայի նյութերի և բաղադրիչների ամբիոնի պրոֆեսոր,
11.2008թ. - 08.2011թ. - ՀՀ սփյուռքի նախարություն, նախարարի տեղակալ,
09.2011թ.-ից - ՀՀ սփյուռքի նախարարի խորհրդական,
Ֆիզիկա-մաթեմատիկական գիտությունների դոկտոր է (1990թ., Սանկտ Պետերբուրգի տեխնիկական համալսարան), պրոֆեսոր (2005թ.),
2013թ.-ին պարգևատրվել է «Մովսես Խորենացի» շքանշանով:

Գիտական գործունեություն

Երեք ուսումնամեթոդական ձեռնարկների, երկու մենագրության և շուրջ 120 գիտական հոդվածների հեղինակ է, որոնց գերակշիռ մասը հրատարակված է արտասահմանյան հեղինակավոր ամսագրերում: Մասնակցել և զեկույցներով հանդես է եկել բազմաթիվ միջազգային գիտական համաժողովներում:

Միջազգային կապեր և այցելություններ

1984-1985թթ. - ԱՄՆ, Լուիզիանայի պետական համալսարան, Ռիվերսայդի կալիֆորնիական համալսարան, գիտական երկարատև գործուղում:
1989-1990թթ. - Ռուսաստան, Սանկտ Պետերբուրգի ԽՍՀՄ ԳԱԱ Իոֆֆեյի անվան ֆիզիկա-տեխնիկական ինստիտուտ, դոկտորանտ:
1988, 1992, 1994, 1997թթ. - Իտալիա, Տրիեստի տեսական ֆիզիկայի միջազգային կենտրոն, մեկից մինչև երեք ամսյա մասնակցություն գիտական դպրոցի աշխատանքների որպես առաջատար հետազոտող:

1997-2004թթ. - Իտալիա, Տրիեստի տեսական ֆիզիկայի միջազգային կենտրոն որպես այդ Կենտրոնի ընտրված անդամ, մասնակցություն գիտական համաժողովներին, դասախոսություններ,գիտական աշխատանք,
2001թ. - Իտալիա, Պավիայի պետական համալսարան, վեցամսյա գիտական աշխատանք,
2003թ. - Ֆրանսիա, Ստրասբուրգի PHASE-CNRS լաբորատորիա, մեկամսյա գիտական համատեղ աշխատանք,
2002թ., 2005թ. - Գերմանիա, Բոխումի համալսարան, մեկամսյա և երեքամսյա գիտական աշխատանք և դասախոսություններ կիսահաղորդչային նանո-էլեկտրոնիկայից,
2007թ. - Կանադա, Տորոնտոյի համալսարան, մեկամսյա գիտական աշխատանք:

Դրամաշնորհներ
INTAS (EU, երկու), TRIL (Italy), ISTC (USA), ANSEF (USA), CIDA(Canada).

Անդամություն գիտական խորհուրդներին և ընկերություններին
ԵՊՀ խորհրդի անդամ (1999-2003թթ.), ԵՊՀ ռադիոֆիզիկայի ֆակուլտետի խորհրդի անդամ (1991-2005թթ.), ՌՀ(Ս)Հ Գիտական խորհրդի անդամ (2005-2009թթ.), ԵՊՀ 049 - Մասնագիտացված խորհրդի անդամ (1998-2009թթ.), ՀՀ ԳԱԱ՝ թղթակից անդամ (2010թ.):

Անձնական տվյալներ ՝ ամուսնացած է, ունի երեք երեխա:

Երանուհի Ազոյան

Ծննդյան տարեթիվ՝ 04.04.1970թ.

Կրթություն
01.09.1988-04.08.1993թթ.-Հայաստանի Պետական Ճարտարագիտական համալսարան, էներգետիկայի ֆակուլտետ, ճարտարագետ - ջերմաէներգետիկի որակավորում:

Աշխատանքային գործունեություն
1987-1988թթ. - «Երքաղգործկոմ» ՃՀՇՎ, տեխնիկ,
1993-1995թթ. - «Նելսոն» ՍՊԸ, գլխավոր հաշվապահ,
1995-1995թթ. - Միքայելյանի անվան վիրաբուժական կենտրոն, գլխավոր հաշվապահի տեղակալ,
1995-1998թթ. - «Երևանի էլեկտրացանց» ՊՁ «Կենտրոն» մ/ճ, առաջին կարգի հաշվապահ, գլխավոր հաշվապահի տեղակալ,
1998-2002թթ. - «Կենտրոնական Էլեկտրացանց» ՊՓԲԸ, գլխավոր հաշվապահի տեղակալ
2002-2006թթ.- «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ, գլխավոր հաշվապահի տեղակալ
2006թ.-ից առ այսօր - «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ, Հաշվապահական հաշվառման և հաշվետվությունների դեպարտամենտ, գլխավոր հաշվապահի տեղակալ:

Մնացական Մնացականյան

Ծննդյան տարեթիվ՝ 25/07/1954թ.

Կրթություն

1971-1976թ. - Երևանի Պոլիտեխնիկական ինստիտուտի էներգետիկական ֆակուլտետ, «Արդյունաբերական ձեռնարկությունների, քաղաքների և գյուղատնտեսության էլեկտրամատակարարում» մասնագիտությամբ:

Աշխատանքային գործունեություն

1976-1982թթ. - «Հայգլխէներգո» ԱԳՎ «Արևելյան էլեկտրացանցեր» մասնաճյուղ՝ ճարտարագետ - կարգավար, ավագ կարգավար, ԿԿԾ պետ,

1982-1996թթ.- «Հայգլխէներգո»՝ ԿԿԾ կարգավար, ավագ կարգավար, օպերատիվ գծով ծառայության պետի տեղակալ, «Հայէներգոարդ» ՊՁ գլխավոր ճարտարագետի տեղակալ - ԿԿԾ պետ, Կարգավարական վարչության պետ - գլխավոր կարգավար, գլխավոր տնօրենի տեղակալ օպերատիվ մասով,

1996-1197թթ.-ՀՀ Էներգետիկայի և վառելիքի նախարարություն՝ էներգակիրների իրացման և շրջանային ցանցերի աշխատանքների համակարգման վարչության պետի տեղակալ, պետի պաշտոնակատար,

1997-2002թթ. - «Հայէներգո» ՊՁ «ԲԷՑ» ԴՁ «Կենտրոնական էլեկտրացանցեր» մասնաճյուղի գլխավոր ճարտարագետ,

2002-2007թթ. - «Հայաստանի էլեկտրացանցեր» ՓԲԸ, տեխնիկական գծով տնօրեն, գլխավոր տնօրենի տեղակալ-տեխնիկական հարցերով տնօրեն,

2007թ.ից - «Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր» ՓԲԸ-ի գլխավոր տնօրեն:

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի N 1322-Ա հրամանի համաձայն «Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր» ՓԲ ընկերության գլխավոր տնօրեն Մ.Մնացականյանի պաշտոնավարումը կասեցվել է 2024թ. հունիսի 14-ից:

Դավիթ Գրիգորյան

Ծննդյան տարեթիվ՝ 13/09/1989թ.

Կրթություն

2006-2010թթ.-Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան,Կառավարման ֆակուլտետի բակալավրիատ,

2011-2013թթ.- Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան ֆինանսական ֆակուլտետի մագիստրատուրա:

Աշխատանքային գործունեություն

2010-2015թթ.-«ՌԵՍՈ Ապահովագրական» ՓԲԸ, Գույքային ապահովագրության բաժնի ավագ մասնագետ,

2016-2017թթ. - ՀՀ հատուկ քննչական ծառայություն, Ֆինանսական բաժնի գլխավոր մասնագետ,

2017-2018թթ. - Գյուղատնտեսության զարգացման հիմնադրամ, Պետական գնումների մասնագետ, գործերի կառավարիչ,

2018-2023թթ. - «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ, գլխավոր տնօրենի տեղակալ,

2023թ.ից - «Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր» ՓԲԸ գլխավոր տնօրենի տեղակալ,

14.06.2024թ. - «Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր» ՓԲԸ գլխավոր տնօրենի պարտականությունները կատարող:

Անձնական տվյալներ՝ ամուսնացած է, ունի 2 երեխա:

5. Խորհրդի աշխատանքի գնահատումը

Խորհուրդը չի ընդունել գնահատման քաղաքականություն:

Խորհուրդը չի իրականացրել ինքնագնահատում:

6. Խորհրդի հանձնաժողովները

Ընկերության խորհուրդը չի ստեղծել խորհրդի հանձնաժողովներ:

Խորհուրդը աուդիտի հանձնաժողով չի ստեղծել:

7. Գործադիր մարմին

Գործադիր մարմինը (գլխավոր տնօրենը) նշանակվում է Ժողովի (Բաժնետիրոջ) որոշմամբ և իրականացնում է Ընկերության ընթացիկ գործունեության ղեկավարումը: Գործադիր մարմնի իրավասությանն են պատկանում Ընկերության գործունեության կառավարման հետ կապված բոլոր հարցերը, բացառությամբ Ժողովի և Խորհրդի բացառիկ իրավասություն հանդիսացող հարցերի: Գլխավոր տնօրենն իր պարտականությունների կատարման ընթացքում գործում է ելնելով Ընկերության շահերից և պատասխանատվություն է կրում Օրենքով և Ընկերության Կանոնադրությամբ, այլ իրավական ակտերով և Ընկերության հետ կնքված պայմանագրով (որն ընկերության անունից ստորագրում է Ընկերության բաժնետոմսերի կառավարման լիազորություն իրականացնող անձը՝ ՀՀ ՏԿԵ նախարարը) նախատեսված գործառույթների և պարտականությունների բարեխիղճ և պատշաճ կատարման համար: Գործադիր մարմնի (գլխավոր տնօրենի և գլխավոր տնօրենի պարտականությունները կատարողի) համառոտ կենսագրությունները ներկայացված են սույն Զեկույցի 4-րդ բաժնի Ընկերության Խորհուրդը բաժնի «4.4.Տեղեկություններ Ընկերության Խորհրդի կազմի մասին» ենթաբաժնում:

8. Տեղեկատվություն Ընկերության իրական շահառուի մասին

Ընկերության իրական շահառու է հանդիսանում Ընկերության գործադիր մարմինը՝ մինչ 2024թ. հունիսի 14-ը գլխավոր տնօրեն Մնացական Մնացականյանը, իսկ 2024թ. հունիսի 14-ից՝ Ընկերության գլխավոր տնօրենի պարտականությունները կատարող, գլխավոր տնօրենի տեղակալ Դավիթ Գրիգորյանը:

9. Ներքին աուդիտ

Խորհրդի կողմից Ընկերության ներքին աուդիտ չի նշանակվել:

10. Կորպորատիվ քարտուղար

Խորհրդի կողմից Ընկերության կորպորատիվ քարտուղար չի նշանակված, սակայն նրա պարտականությունները մասնակիորեն կատարում է խորհրդի քարտուղարի պարտականությունները կատարողը (Ա. Պողոսյան) համաձայն խորհրդի գործունեության կանոնակարգի՝ խորհրդի նիստերի հրավիրում, նիստին ներկայացվող փաստաթղթերի նախապատրաստում, արձանագրության վարում և այլն:

11. Արտաքին աուդիտ

Ընկերությունը 2025թ. մրցութային կարգով արտաքին աուդիտ է ընտրել «ԷՅ ՎԻ Քընսալթինգ ընդ Աուդիտ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը, որը հաստատվել է ԲԸ ժողովի կողմից՝ համաձայն «Բաժնետիրական Ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 67 հոդվածի 10-րդ կետի , իսկ նրա վարձատրության չափը սահմանել է Ընկերության խորհուրդը՝ համաձայն «Բաժնետիրական Ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 84 հոդվածի 13-րդ կետի: